

ԲԱԺԱՆՈՐՆ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտարանի համար	12 ձր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	6 "
Իրասանմանի համար	15 "
Տարեկան	8 "
Վեցամսեայ	8 "
Սենտիկայի համար	3 սյր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	1.50 "

Սենտիկայի համար 3 սյր. Վեցամսեայ 1.50 "

ՊԱՆԻՍԿ ՎՃՅՐԵԼԻ

Սանդղակի տողը առաջին կողմից համար 40 սանդղակի. իսկ վերջին կողմից համար 20 սանդղակի. երեքին անի սանդղակներու համար 20 ՕՊ զեղջ կրչայ:

Պաշտարանի համար ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ)

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

Պ. ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

Отговорникъ: Д-ръ Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ դրկիչ
Խնամարարական հասցիք

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեմ տրուի

Սրատասնմանի համար ձեռքի (20 ՍԱՆԹԻՄ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն . որոնք վճարած չեն , կը խնդրենք անյայտ զրկել բաժանագիրները , որովհետեւ առաջին վեցամսեան կը լրանայ Բաժանորդները պէտք է հասկնան որ թերթը ստակով կ'ըլլայ :

ՀԱՅ ՎԱՐՃԱՊԵՏՆ

Հայ վարժապետ . . . Ահա գայթակղութեան գլխաւոր քարը մեր կրթական խնդիրներու վիճաբանութեանց մէջ , եւ որուն կուգան զարնուիլ քրննադատութեանց երկու տարբեր հոսանքներ , հակառակ հոլերով ուռած :

Մէկ կողմէն՝ ծայրայեղ պահանջկոտներու բանակն է որ , կատաղօրէն կը յարձակուին անոր վրայ , ամէն արժանիք ուրանալով անոր մէջ , եւ նախատինքի ու հայհոյանքի տարափի մը մէջ կուգէ խնդրել զանի , «մի քանի բացառութիւններ յարգելով» պայմանագրական բանաձեւին ետեւն ամրացած : Միւս կողմէն՝ աւելի բուռնութեամբ են , որ կը ջանան զանի ներկայացնել ինքնանուէր զոհ մը միջավայրին , աղաներու քմայքին խաղաղիկ , եւ կամ բաւութեան նոխազ մը , եւ ապա ու անվերջ կիրքերու մեղքերը սրբող :

Նպատակ չունիմ հոս երկար կանգ առնելով որոշելու թէ՛ այս հակընդդէմ քննադատութիւններէն ո՞րն է ուղիղը , եւ կամ միջեւ ո՞ր աստիճան իրաւացի կէտեր կան անոնց մէջ , այլ պարզապէս պիտի փորձեմ ուրուագծել անոր գործունէութիւնն ու ձգտումները , ընթացողին թողլով ուղղակի հետեւանքներ հանելը :

Հայ վարժապետը , որ մեր ազգային կեանքի բարդ գործունէութեան մէջ , մտքի աշխատաւորներու շրջանակին մէջ ունի իր որոշ տեղը , եւ ուր մասնուղին , գորդին ու խօսողին հետ գլխաւոր աշխատողներէն է ազ-

գային վերածնութեան գործին , պէտք է նախապէս զատել այն կարգ մը բազմախնդիրներէն , որոնք երբ ուրիշ ասպարէզներու մէջ յուսախաբ կը լլան , ապրելու միջոց մը չեն գտներ , ճարպիկ դարձուածքով մը վարժարանին կը դառնան , եւ քանի մը անուշ խօսքերով , աս ու ան ազգային առջեւ սողոսկելով կը յաջողին սաքերնին դպրոցին սեմէն ներս դնելու , եւ ուրիշ վերստին դուրս նետուելու պատրաստ են առաջին պատեհութեամբ :

Մենք հայ վարժապետը ըսելով կը հասկնանք միայն այն , որ առջի օրէն ուսուցչութիւնը իրեն ասպարէզ ընտրած , կանխաւ չափած ու կշռած է իր ընտրելիք գործին ծանրութիւնը , եւ համեմատած իր ոյժերը . եւ որ չի գինոգնար կամ չի շղանար վայրկեանական յաջողութիւններով , եւ ոչ ալ կը վհատի կամ կը կրկնի իր շուրջը լարուած անթիւ ծուղակներէն , եւ իրեն դէմ եղած անիրաւութիւններէն :

Աւելորդ չէ կարծեմ հոս յայտնել , որ մեր տուած բուն վարժապետի այս սահմանին մէջ կամփոփենք հին , բարի օրերու տիրացուէն , պատուելիէն սկսելով մինչեւ ներկայ դաստիարակ ուսուցիչը ու բրոֆէսէօրը :

Չարմանալի է տեսնել , որ երբեք մեր դպրոցական անցեալ կեանքի ուսումնասիրութիւններու , կամ մանկական յիշողութիւններու մէջ , ծիծաղելի գիծերով կրնան ներկայացուիլ հայ վարժապետի հին գէմքերը :

Միթէ իրաւունք ունի՞նք պահանջելու որ , երբ ժողովուրդը կուռ խաւարով մը պարտուած էր , ուսուցիչը ինքնաբերաբար , հրաշքով մը ամբողջովին ճեղքեր այդ սեւ թանձրութիւնները ու մէկէն լոյսերու մէջ սողդէր ազգը :

Չէ՞ մի որ բնաշրջութեան օրէնքով անհրաժեշտ էր որ հայ վարժապետն ու հայ ազգն փոխադարձաբար պիտար պատրաստէին ու կատարելագործէին , առանց ուսումի , աստիճանաբար

յաջորդական խաւերէ անցնելով :

Ներկային առաւելութիւնները երբէք չեն մխտէր մեր նախորդներու արժանիքն ու օգտակարութիւնն գէթ իրենց ժամանակին համար :

Այսօր մեր հայ ժողովուրդին մէջ երբ կը զգացուի պէտքը աւելի միօրինակ կրթական ուղղութեան մը , աւելի գրական դաստիարակութեան մը , ու երբ աւելի պահանջկոտ կը դառնանք , վարժապետն ալ իր տեղը գամուած չի մնար . ուրիշներէն առաջ ան է որ կը տեսնէ պակասն ու առաւելութիւնը . եւ թէեւ ինքը իբրև վարժապետ պատրաստուելու համար՝ ազգէն դուրս թիւններ դառնուի , եւ շատ անգամ իր խղճամիտ աշխատութիւն կը վարձատրուի չնչին թոշակով մը . սակայն բարոյական վարձատրութեամբ մը միայն բաւականանալով , եւ գործին նուիրականութիւնովը լիցուած , իր ունեցած միջոցները եւ ժամանակը չի խնայեր , աւելի ընդլայնելու իր ծանօթութեանց շրջանակը , եւ հետամտելու դիւրուսոյց մեթոտներու :

Տասնեակ մը տարիներ առաջ մեր քաղքենի ընթացաւարտներն Եւրոպա կը վազէին ո եւ է շահաւոր մասնագիտութիւն մը ձեռք բերելու , եւ կամ կը հետամտէին աւելի շահաւոր եւ աւելի խոստմնալից գործի մը եւ արհեստի մը : Նոյնիսկ մեր այսօրուան բժիշկներէն , փաստաբաններէն , արուեստագէտներէն շատերը վարժապետութիւնով սկսած են իրենց գործունէութիւնը . եւ քանի մը տարի շարունակելէ , քիչ մը դրամ հաւաքելէ ետքը կ'ընկնէր գրած են , եւ նոր ասպարէզներու մէջ նետուած :

Եւ մի՞թէ՞ մնացողները , եւ մինչեւ վերջը իրենց պաշտօնին յարած կեցողիներն են յանցաւորները :

Այսօր սակայն աւելի գաղափարական է մեր երիտասարդութիւնը եւ Եւրոպայի մէջ ունինք ուսանողներ , որոնք հեռանալով

ուկեպատ արահետներէ , կը հետեւին մանկավարժութեան , ընկերային , գրական եւ գիտական մասնագիտութեանց , իրենց նպատակ ունենալով ապագային մէջ վարժապետներ ըլլալ :

Բոլորովին անիրաւ չե՞նք ըլլար երբ փոխանակ կեցածներն ու պատրաստուողներն յարգելու ու քաջալերելու , փորձենք խրճրճել զանոնք , քննադատութեանց ձեւին տակ նպատակաւոր հայհոյութիւններ ուղղելով անոնց հասցէին :

Եթէ անկեղծ են մեր քննադատներն իրենց այն պահանջներուն մէջը , թէ պէտք է բարձրացնել մեր վարժարանները եւ այլն :

Թող նախապէս լայնցնեն ու կանոնաւորեն պիւտճէնին , թող ազատեն դպրոցները իրենց տարտամ զեկավարութենէն , ու յետոյ երբ անաչառ ընտրութիւններու ելլեն , հայ կարող վարժապետը չէ որ պիտի պակսի :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ , 14 Յուլիս

Կրօնական ու Խառն ժողովներն իրար վրայ կը գումարուին , նիստեր կ'ընեն , կը վիճաբանին . . .

Նախ հարցեր կը քննուին , շատ խնդիրներ կը ձեռնուին , բայց ամենէն աւելի կ'ընկնէր կաթողիկոսական փորձաք խնդիրն է : Յուցակի մը խնդիրն է որ առեր անցերն են :

Չանձրացայ ալ չեմ կրնար ատ խնդրոյն մասին գրել :

Օրուան հարցը չինական գէպքերն են եւ թուրք կառավարութեան ու հոգեւորականութեան բռնած գիրքը :

Անցեալ անգամ ատ մասին գրած եմ : Իայց ասկէ 18-20 օր առաջ «Մալիւմաթ» որ իբր Եւրոպայի բեբան կը գիտուի , հետա-

քրքիր յօդուած մը հրատարակեց, «Նորոգութիւնները Զինու մէջ» որով ան Զինացիներու խտուածիւնը գէպի եւրոպացիները կարգարացնէր :

Նէյխ-Իւլ-Իսլամի ձեռքի տակ եղած պերճախօս մօլլաներն ու իմամներն ալ Զինու գէպերը օրուան քարոզի նիւթ շինելով սկսան բաւական պարզ ակնարկներ ընել քրիստոնեաները ջարջելու խնդրոյն վրայ . . . :

Խորհուրդ կուտային հետեւելու շինելու հայրենասիրական սիրագործութիւններուն :

Երկրորդ եւ Համիտ չորրորդ բերաններէն բաւ մը չէին արտասանած այդ շարժումը գաղափարներու համար :

Ու որչափ եռանդով թուրք թերթերը կարճագոյն գէպի նորոգութիւններու, մասնաւորապէս առաջին Ռուսներու կրած անյաջողութիւնները թիւն. Զինի եւ Մանչուրիոյ մէջ . . . :

Համիտ ատպէս կուզէր :

Բայց եւրոպական թերթերը վայնասուն մը հանեցին . . . գետնական մարմինը իրար անցաւ, պալատ գիմեցին, բացատրութիւն պահանջեցին . Համիտ սկսաւ պոչը քաշել, աղուէսի գիրք մը առնել եւ իբր ցոյց իր անհուն սիրոյ ու համակրութեան առ եւրոպացիներն ու եւրոպական քաղաքակրթութիւնը բաղմամբիւ օրինակներ բերաւ թէ ինչպէս ինք սիրով կընդունի եւրոպայէն եկած ամէն հիւրերը, կը հիւրասիրէ զանոնք եւսլին, Դեսպանները պահանջեցին որ իսկոյն սանձ մը դրուի ավիզը ցփեղ կրօնական քարոզներուն եւ լրագրական յօդուածներուն աս գէպերու առթիւ :

Անմիջապէս տարբեր քամիներ

երեւցան : «Մալիւմաթ» իսկոյն նոր յօդուած մը վիժեց . «Զիններու բռնած գիրքը միանգամայն վայրենի է և անանական . ընդգէմ քաղաքակրթ ժողովրդի վարուց : Ն. Կ. Բ. Սուլթան խիստ վրդոված է շինելու գաղանկական վարժունքէն ընդ գէմ եւրոպացիներու և կը դիտէ շինելու պատճառը իբր անհրաժեշտ ու արդար քայլ մը . . . »

Հոսանքը փոխուեցաւ : Պօլսոյ հեռագրական գործակալութիւնը ամէն կողմ հեռագիրներ ու հարքումներ տարաւ, բնակով որ Պօլսոյ մէջ երբէք ընդգէմ քրիստոնեաներու քարոզներ չեն եղած, երբէք շինելու պաշտպանող գաղափարներ չեն տարածուած և նաև :

Չար լեզուները կը ըսեն որ գետնականներէն մին (կարծեմ ուսուկանը) իբր թէ Համիտի առաջարկեր է իբր խալիֆ իսլամութեան կողմ մը ընել և պախարակել շին մահմետականներուն մասնակցութիւնը աս բարբարոս արիւնհանգիստ թեան մէջ . . . բայց կըսուի որ աս ծրագիրը հաւանութիւն չէ գուր գետնականներուն կողմէն :

Ըստ երեւոյթին՝ Համիտ ու զինքը շրջապատողները կը կարծեն որ Զինու գէպերը կարող պիտի ըլլան այնչափ զբաղեցնելու թուլացնել եւրոպական պետութիւնները, որ թուրքիա վերջապէս կարող պիտի ըլլայ յաղթելու սուր և անոր ձեռքէն կովկասը ետ խլել : Աս երազներու հովերով կորօրուին մեր վարիչները :

Բայց գոյժ մը . բոթ մը հասաւ ուսական գետնականներէն և ուսա թրքական սահմաններէն . գոյժ մը որ Համիտի աղիքներն իրար անցուց, Զինովիէֆ իմա-

ցուց Բ. Դրան որ կովկասի սահմաններուն վրայ Համիտական քրտերը շատ մը անկարգութիւններ կը ընեն, «մեր սահմանները կանհանգստացնեն . ձեզի շատ անգամ դիմեցինք, դուր կարգը չի կրցիք վերահաստատել, ձեր «պօքսէրները» (համիտականները) չի կրցիք զսպել . այժմ մենք պէտք եղածը անօրինած ենք, առաջին յարմար առթիւ յարձակիլ, ներս մտնել ձեր սահմաններէն և զսպել խառնակիչները» : «Թանը» և խել մը գերման թերթեր ալ հեռագիրներ տպեցին որ Ռուսիա զօրք կը կեղդոնացնէ կովկասի թրքական սահմաններուն վրայ ներս մտնելու և իր սահմանը անհանգստացնող քիւրտերը զսպելու համար : Ի հարկէ Ռուսիա թուրքիոյ սահմաններէն ներս չի մտնելու առանց կանոնաւոր պատերազմ հրատարակելու, ի հարկէ ան զօրք չի «կեղդոնացնել» թրքական սահմաններուն վրայ . . .

Բայց աս լուրն անգամ բաւեցուցնելու թուրքիոյ պառչ վարիչներուն, որ Զինու գէպերը անչափ ալ չեն թուլացուցեր կամ ջլատեր Ռուսիոյ ուժերը : Եւ աս լուրերը իբր թեթեւ սպառնալիք մը իր անխառնափոխ ազդեցութիւնը պիտի ունենայ Երևուզի վրայ :

Արդէն որոշուած է որ 25ամեայ կարմիր դարեգարձը պիտի 3 օր տօնուի : Հետագըքը շարժման այն է որ աս օրուան կը պահուի Հիւճազի «օգային» երկաթուղիի աշխատանքներու բացումը, աս օրուան թողուած է խել մը զօրա-

նոցներու . պահակատուններու, մզկիթներու, դպրոցներու և բանտերու պաշտօնական բացումը և ամենքն ալ . ով անմտութիւն, պիտի կրեն «Համիտիէ» դիւային անունը :

Անշուշտ եւրոպական թերթերէն տեղեկացաք որ 30 օր պայման տրուած է եւրոպա փախած պաշտօնեաներուն թուրքիա վերադառնալու . եթէ ոչ պիտի դատուին ու պատուին :

Խորհուրդ կուտայի կարգ մը լրտես յեղափոխականներու օգտուելու աս Սուլթանական իմաստուն վճիռէն և դառնալ Վոսփորի գեղածիծաղ աիբերը . . . եթէ ոչ օր մը վերջնապէս դիմակին վար կիյնայ, լրտեսութեան ինքնազիր նամակին կերեւայ և իրենց համակրողներու մէջէն անգամ կելլայ անկեղծ անձ մը որ քաջութիւն կուենայ անոնց սուղունական գարշելի կեանքին վերջ դնելու :

Եկէ՛ք, տեսաք լրտես յեղափոխականներու խմբագիրներ, եկէ՛ք, ձեր հայրիկ Համիտի 25ամեակն է . մեղադար մը շարադրեցէք, մարգարտաշար գրերով, չէ որ վարժ էք մեղադարներ վիժելու . . . ու ան ատեն հոս հանգիստ կենսաթողակին կը վայելէք իբր վարձք ձեր ըրած ու ընելիք վասակութեան :

Պօլսու եկէ՛ք լրտես յեղափոխականներ . . .

ՌԱԺ

—)(—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հին Դեմոկրատիայի ԿԱՐ ՅԵՂԱՓՈՒԹԵՆԷՆ

(Ք. Ք. Ի)

Պէնքովսքի, Օլով, Գապլէշքով, Պօպէքով և Բէթլէշքով : Այս հինգ անունները չեն բաժնուիր իրարմէ մարդու մը մաքին մէջ . երբ նա պուլկար յեղափոխութեան էն արիւնտ ու աղետալի շարժումներու մասնակցեցը իր առջեւ կը բերէ, որոնք «պրիւնան յեղափոխութիւն» անուամբ կը յիշատակուին պուլկար պատմութեան մէջ :

Եթէ ցանկացող մը ուզէ մի քանի անուններ ուրուագծելով այդ գէպերը լուսաւորել, չը կրնար ատոնցմէ եւ ոչ մին բացը ձգել, առանց մխրճուելու անիրաւութեան մը մէջ, եւ առանց ստուերտուելու այդ հինգ գործիչներու կատարած գործին յատկանիշը :

Չինգն ալ կեանքերին զոնեցին գաղափարի մը, որուն նուիրուած էին : Պէնքովսքի պաշտպաններու գնդակէն խոցուած ինկաւ, Վօլով

ջրանդձ եղաւ փախուստի ժամանակ . Բէթլէշքով մարտիրոսի սարսափելի մահուամբ մեռաւ, Գապլէշքով թուրքերու ձեռքը ինչպով իր վեհ ոգին կտակեց պատմութեան, սուրբ ու անբասիր անձնագրութեան վեհագոյն գափնիովը զարգարուած իր կեանքը վերջացնելով զապթիէի մը ատրճանակովը Կապրովայի բանախն մէջ Միայն Պօպէքով յաջողած էր ապաստանիլ Ռուսիա և հոն սպասել աղատարար պատերազմին . բայց իր կրած բարոյական ու ֆիզիքական զրկանքները զինքը գատապարտած էին արգէն . և մահը իրեն հասաւ թրնովայի մէջ պատերազմը չը վերջացած : Աս վերջինը՝ նահատակուողներէն ամենէն երջանիկն էր :

Միւսները իրենց հոգին աւանդեցին սոսկալի սեւ արհաւիրքի մը մէջ, իրենց բոլոր յոյսերը ու երազները ջախջախուած, փշրուած տեսնելով մռայլ աղէտներու մէջ :

Դիուար է տեսնել, համաշունչ գործունէութեամբ միացած երկու հոգի՝ որոնք իրարմէ այնչափ տարբերին, որչափ Պէնքովսքի և Օլովի մէջ ինչ կը դատէր զիրենք Դեսառլի

հանդիպումին կարելի էր նշմարել, որ գործի ոգին պատահմամբ իրարու մօտեցուցած էր զանոնք, Բնութիւնը տարբեր ճամբայներ գծած էր իրենց : Որքան որ մին տիրական, սուր, օտար համոզումներու չը հանգուբող, ինքնավստահ ու փառասէր, միւսը այնքան հակառակը, մեղմ, խոնարհ, նեղ, և մինչև իսկ կանացի : Պէնքովսքիի համար բաւական չէր որ իր գաղափարները ընդունին, անհրաժեշտ էր նաեւ հպատակիլ իրեն ամբողջովին . կամքը ու գատողութիւնը զոնկով նա չէր ուզէր և չէր համբերել ալ որ իր և ուրիշներու միջև եղած յարաբերութեան կապը կոյր հնազանդութեան մը շրջանէն գուրս ըլլային :

Իրեն գէմ եղած ընդդիմախօսութիւն մը ինչ ձեւով ալ որ արտայայտուած ըլլար, մեղադրելի բողոք կը համարէր : Նա իմաստակի միակերպ ամականներով կը մկրտէր ամէն անոնք, որոնք հնազանդութեան վրայ կը կասկածէր :

անոր բնաւորութեանն ու աշխարհայեցողութեանը : Նա չափազանց քնքուշ էր, զինքը քոչ փոթորկին գէմէր թեւերը անգոր էին : Միայն համոզումն ու ժողով էր որ կը ծառայէր գործին : Նա Պէնքովսքիի գործերը կրնար ամբողջապէս, բայց չէր կըրնար անոր տեղը լեցունել, Այն վարանումները որ զինքը կը պրկէին, Պէնքովսքիի համար գոյութիւն չունէին . Եթէ երկուքը ֆրանսական յեղափոխութեան ժամանակը ապրած ըլլային և ֆոնվալիսի մէջ ինչոյն, դեռ առաջին օրէն պիտի բաժնուէին, մէկը լեռան գապաթը բարձրանալու, միւսը ձորը իջնալու—ժիւրօնտեանց բանակը, անոնց հետ միասին գրուելու կիլիսիոյն ընծայելու :

Երբ երկուքը ճամբայ ելան գործելու Պուլկարիոյ մէջ, առաջնորդութիւնը Վօլովի կը պատկանէր . սակայն երբ գործունէութեան ձեռնարկեցին, Պէնքովսքի անոր տեղը գրաւեց և մինչև վերջը զայն նսեմացուց : Նա եղաւ առաքելը և այսպէս պէտք էր ըլլար, հակառակ Վօլովի անհաստական նախաձեռնարկող ձգտումներուն, որոնցմով իրանց էր Պէնքովսքիի վրայ, Այս առաւելութեանը հանդէպ, Պէնքովսքի տէր էր

ՄՈՒՌԱՅՈՅԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ
ՅՈՒՆԻՍ ԶԻ ՆՈՂԵԶԱՆ-
ԳԻՍՏԸ ԵՒ ԵՐԵԿՈՅԹԸ

Մահեր կան որոնք անհատը կան-
մահացնեն. գիտութեան նահատակ-
ները, հայրենիքի փրկութեան ան-
վեհեր զինուորները անոնցմէ են.
զորս ազգերու պատմութիւնը կը յա-
ւէթօցնէ ճշմարիտ փառքի պսակը
գնելով անոնց ճակատին. Յարգանքը
զոր մարդիկ կը նմայեն անոնց, ազ-
գայու կամ ցեղերու նեղ շրջանակին
մէջ չի պարփակուիր. համայն մարդ-
կութիւնը միաբերան կը գովէ անոնց
ընթացքը. կը խրախուսուի անոնց օ-
րինակէն ու կերպէ անոնց պոթը իր
ամենէն զգայուն ու անկեղծ սողե-
րուն մէջ. Հայկական շարժումներու
ատեն ինքնարեւոյժ ի մահ ընթաց-
քով Արարածներու, Ժիրայրներու կամ
Բարկէններու յիշատակը ամբողջ աշ-
խարհի համար նուիրուական է. որով-
հետեւ իր նմանին. իր ազգին պատ-
ւոյն ու անկասկածեալ համար գոհ-
ւորի տիպարը կը պարունակէ իր մէջ.

Ու յարգանքի այն պարսկականու-
թիւնը որ կը ծանրանայ մեզ, յա-
ջորդներու վրայ, ինչ ազգէ կամ
կրօնքէ ալ ըլլանք, այնքան աւելի
ստիպողական ու անհրաժեշտ կը
դառնայ, որքան վիճակներու նսյ-
նութիւնը, հարստահարութեանց ու
ճնշումի միակերպութիւնը, նոյն
բախտով կը կապէ նաեւ զմեզ իրա-
րու, եւ տեսակ մը բնական համե-
րաշխութիւն կը ծնի փոխադարձա-
բար:

Փոխադարձ համակրութեան ու հա-
մերաշխութեան այս ինքնածին զգա-
ցուն էր, որ ներշնչեց Մակեդոնա-
կան Յեղ. Բարձր. կոմիտէն կապուել
Հայ Յեղ. Դաշնակցութեան հետ. նոյն
զգացունն էր անշուշտ, որ մղեց Յի-
լիպէյի Մակ. կոմիտէն հրախրել տեղ-
ւոյն Դաշնակցութիւնը մասնակցե-
լու Մուսթաֆայի յիշատակին կազ-
մուելիք հանդէսին:

Մուսթաֆայի հազուադէպ
մարդերէն է, որոնք փառքի կամ մե-
ծութեան համար ապրիլ չեն սիրեր,
որոնք յօժարակամ յանձն կառնեն

նեղութիւնն ու սուստանքը զաղա-
փարի ու համոզումի յաղթանակին
համար: Գաղանային բռնակալու-
թեան մը սակ հեծող ար մը համա-
րին ժողովրդին թշուառութիւննե-
րը վաղուց զինքը կը տանջէին, եւ
իր սիրամ վրէժի գաղափարով պաշա-
րած էին:

Ոչ սպայի շողջողուն ու ոսկեհոս
համազգեստը, ոչ հեշտալիր պերճան-
քը ազատ ու երանուէտ կեանքի մը
որ այնքան խոստմանալից էր իրեն հա-
մար. չի կրցաւ զինքը կասեցնել,
ու 1895 ին գարնան. Մուսթաֆայի իր
խմբին հետ թրքական սահմանը ան-
ցաւ իրագործելու համար այն գա-
ղափարը զոր վաղուց իր միտքը
սկսած էր փայտալել:

Յունիս 28ին թուրք զորքերը շր-
ջապատեցին Մուսթաֆայի խումբը,
անեղ զիմադրութիւնը սկսաւ: Բօ-
րուչիք նազէֆ, Մուսթաֆայի ընկերը,
ինկաւ այդ կողմին մէջ, Մուսթաֆայի
քանի մը ընկերներով յաղողեցաւ
յոյս տալ, Բայց Յունիս էին թշնա-
մին անոր հետքը գտնալով, սկսաւ
զայն հալածել, Պալքաններու ստորո-
տը, ձորի մը մէջ, թուրք զորքերը
Մուսթաֆայի ետեւէն հասան, ու զայն
բռնելով կտոր կտոր բրին: Վեց հո-
գի միայն իր ընկերներէն յաղողե-
ցան փախչել եւ Պուլկարիա վերա-
դառնալ:

Հայրենիքի այս անմահ զինուորին
սարեգարձն էր որ տօնեց Յունիս 28ին
տեղւոյս Մակեդոն. կոմիտէն:

Հանդէսին կը մասնակցէին, մաս-
նաւորապէս կոմիտէին կողմէ եղած
հրաւիրին համեմատ, Յիլիպէյի հայ
Դաշնակցական կոմիտէն եւ Շաքէի
հայուհեաց ընկերութիւնը, Պուլկա-
րական «Նուստա» մարմնամարզա-
կան ընկերութիւնը, Երաժշտական,
ընկերութիւնները եւ պուլկար ու
սուցչական Ակումբ: Առաւօտուն հո-
գեհանգստի արարողութեանէն ետք
թափուով ուղղուեցան դէպի հանրա-
յին պարտեզ. առջեւէն երկու զոյգ
հայաստանցիներ կը տանէին Դաշ-
նակցութեան կոմիտէին եւ «Շաքէ»ի
նուիրած ծաղկակապակները, որոնց
ետեւէն կարգով կը տանէին օրուան
նահատակներուն կենդանագիրքը
պսակներով զարդարուած: Վերոյիշ-

եալ երեք Պուլկարական ընկերու-
թիւնները իրենց յատուկ գրօշակնե-
րով եւ հայ համակիրներու բազմու-
թիւնը մը զոյգ զոյգ շարուած կը հե-
տեւէին թափորին: Հանրային պար-
տեղին առջեւ կենտրոնէֆ ատենախօ-
սութիւն մը ընկելով, զուցուց Մու-
սթաֆայի գործին վեհութիւնը, ձաղ-
կեց այն պուլկար մեծամասնութիւնը
որ անորակելի անտարբերութեան
մը մէջ թաղուած է: Յետոյ շնորհա-
կալութիւն յայտնեց մասնաւորապէս
հայերուն, որոնք իրենց մասնակցու-
թեամբ յարգած էին Մուսթաֆայի յի-
շատակը, եւ պարգևով երկու բաղ-
դակից զգեցրու կրած տառապանք-
ները, ըսաւ թէ ոչ քան ալ անհաւա-
սար ըլլան ուժերը, արդարութիւնը
եւ ազատութիւնը միշտ պիտի յաղ-
թեն, եւ Հայաստան ու Մակեդոնիա
իրենց անկախ ու ազատ օրերը պիտի
ունենան. քանի որ իրենց մղած
կռիւր սին փառքի մը կռիւր չէ:

Հակառակ անդադար տեղացող
սաստիկ անձրևին իրկուներ զրա-
կան երեւոյթին ներկայ գտնուեցան
Պուլկար եւ Հայ երկսեռ բազմութիւն
մը: Երեկոյթը տեղի ունեցաւ հան-
րային պարտեղին թատրոնին մէջ:
Թատերաբեմին ալ կողմը հայ նա-
հատակներու պատկերներով զար-
դարուած էր: Անոնց մէջ տեղը զըր-
ուած էր սգակիր Մայր-Հայաստանի
պատկերը. աւերակներու մէջ ար-
տաս լաթոր, Չորս կողմը Բարկէյի,
Պետի, Կորկոտեանի, Դաւթեանի եւ
բոլոր Հայ Յեղ. նահատակներու պատ-
կերները սեւ շրջանակներու մէջ,
մայրիկ ոտներով շրջապատուած
շարուած էին խաչածու: Ամբողջ
խումբը շրջանակուած էր, սեւ շը-
ղարով: Թատերաբեմին ձախ կողմը
Պուլկար հին ու նոր յեղ. նահատակ-
ներու պատկերները դրուած էին
ծաղկէ պսակներու մէջ առնուած:

Երեկոյթը սկսաւ Պալթաճիէֆի
ատենախօսութեամբ, որուն յաջոր-
դեցին զանազան ատենախօսութիւն-
ներ եւ արտասանութիւններ: Պուլ-
կար երաժշտական ընկերութեան
խմբերգներով ընդմիջուած, Հայ կի-
ներն ալ երեկոյթին մասնակցեցան,
Տիկ. Զ. արաստանեց Նաստոնի մէկ
բանաստեղծութիւնը: Հայոց Ազգ.

վարժարանի սանուհիներէն մէկը,
Գամառ-Գաթիպաի «Ղարիպ Մշեցի».
«Աղասու մօր երգը» արտասանեց, Օր-
Գ. կարգաց Կրօշակի Հայրուկի նոր
սարին:

Երեկոյթը վերջացաւ կենդանի
պատկերով մը: Երբ առաջին վարա-
գորը բացուեցաւ. բեմին մէկ կողմը
Մակեդոնիան եւ միւս կողմը Մայր-
Հայաստանը կը ներկայանային բըռ-
նակալ ձեռքերու մէջ շղթայուած.
ետին ժողովուրդը սխուր յուսահատ
կեցած էր, հողագործը իր բահին յե-
նած, ձեռքը ճակատին կը մտածէր
վիճակին դառն անստորութեան վրայ,
ուրիշ մը մանգաղին կրկնած՝ զըր-
կանքէ ու մամուռքէն խորշոմած
քրտնաթոր ճակատը կը սրբեր: Բայց
արդէն վրէժի զգացումը բոյն գրած
էր շատերու սրտին մէջ. որոնք ձեռ-
քերնին կը կարկռէին դէպի հրա-
ցան ու սուրը՝ զոր Յեղափոխութեան
ոգին անոնց ցոյց կուտար:

Երկրորդ պատկերին մէջ արդէն
Յեղափոխութեան ոգին ժողովուրդի
բոլոր խաւերուն մէջ թափանցած էր,
Մայր-Հայաստան ու Մակեդոնիան
փարած էին անոր գրօշակին, կէս
մը թօթափելով իրենց երկաթէ շըղ-
թաները: Ամբողջ ժողովուրդը զին-
ուած էր հրացաններով, եւ Ազատու-
թեան կենսունակ յոյսը ամենուն
ճակատին վրայ կը շողար:

Յիլիպէ, 9 Յունիս ԾԱՀԱՊ

ՎԱՌՆԱՅԻ ԳՊՐԸ ԴԱՍԻՆ

Ձեր ձեռնարկը գովելի է եւ
արժանի է քամէն տեսակ քաջա-
լերութեան. բայց երբ եւս ձեռնա-
նին հմայքովը, զմեզ կանչէք եւ
ժամերով դատաւարաէք խառ-
նաձայն երգեցողութիւն մը մտիկ
ընելու: Ինչպէս եղաւ կիրակի
օր, գիտցած եղիք որ ձեր բարի
նպատակին խոստր ու զուլթեամբ
պիտի ընթանաք, ժողովուրդը վա-
նելով եկեղեցիէն:

Գիտեմ որ մեղաւոր չէք, քանի
որ զձեզ մարդու կարող ուսուցիչ
պակասած է, այն ատեն միձայն
երգեցէք:

Կամ լաւը կամ բնաւ:
ԵՐՈՒՍ.Զ

կամքի ու նկարագրի անկող ուժի մը,
եւ անգամ մը իր նպատակակետին
սեւեռուն, կերթար յանգիւստէն ու
կուրօքէն: Դերերու բաժանումը ա
նոր վերապահուած էր Պէնքօվսիին
իր բարեմասնութիւններով ու իր
պակասութիւններով հանգիւստ գոր-
ծին գլուխը կանգնելու մարդն էր,
որուն ամէնքը պարտաւոր էին յարե-
լու, առանց մտածելու թէ ի՞նչ մի-
ջոցներով պիտի ձեռնարկուի եւ ի՞նչ
հետեւանքներով պիտի վերջանայ
ժամանակն էր ոչ թէ խորհրդածելու,
ալ գործելու. ոչ թէ յորդորելու
ալ հրամայելու, ոչ թէ աղերսելու
ալ թելագրելու:

Եւ այս զերը միայն Պէնքօվսիին
կարող էր կատարել:

Իր նկարագրի հետ ամէն մի ըն-
դամադրական բաղնւմ վէճերու
ճնունդ կուտար. եւ եղան ալ որ ժա-
մանակին թույլատրութեամբ հետզհե-
տէ աւելի արծարծուեցան ու տխուր
հետեւանքներ ունեցան:

Կը պատմեն թէ երբ ապստամբու-
թիւնը յայտարարուած էր, Պէնքօ
վսիի սուրհանդակները կուղարկէ Գոր-
բէշվեցու հետեւեալ խօսքերով,
«Գնացէք, ըսէք մօրս թէ իր որդին
Պուլկարիոյ ազատութեան դրօշը ա-
ռաջին անգամ ըսյ ձրացնողն է»: Սօ-

աւլիսդ մը պիտի խորհրդածէ այս
տողերուն վրայ:

Իսկ պատմագիրը պիտի ճանչնայ
որ այդ արտայայտած փառասիրու-
թիւնը ոյժ մըն է, որ առաջադրուած
գործին յաղողութեանը համար ան-
հրաժեշտ պէտք էր:

Արտաքին տեսքով յայտնի չէր ըլ-
լար Գապէշքօվի ու Պօպէքօվի միջեւ
ոչ մի նմանութիւն: Տարբերութիւնը
միայն իրենց խառնուածքներուն մէջ
կը կայանար: Մին ետանդոտ, ան-
զուսպ տաք, շատ հաւատացող եւ
այտանդնալից, միւսը պաղ, զգուշ,
ժուժկալ միջնեւ, իսկ խրոխտ, բայց
մօտիկ բնաւորութիւններ էին երբ
զգա մուկներու ու իտէրի աշխարհի
մէջ ոտք կոխէին: Այնտեղ ամէն ինչ
կը միացնէր զիրենք եւ ձեռք ձեռքի
սուսած կերթային: Մէկը առաջին
ներշնչումի մը թափուր կը գործէր,
իսկ միւսը դատողութիւնով, բայց
զանազան ձանապարհներով միեւնոյն
կէտին կը հասնէին: Գապէշքօվ իս-
կայն կը վստակէր. նա չէր սպասեր
որ իր քովը գային, նա անոնց ոտքը
կիրթար եւ երբ պատրանքի հանդի-
պէր ետ կը վերադառնար, Պօպէքօվ

խորախոհ կերպով կը կռէր իր քայ-
լերը, որ ետ դառնալու հարկին չեն-
թաքուի: Անոր համար մարդը հա-
նելուկ մըն էր, զոր ամէն բանէ ա-
ռաջ պէտք էր ուսումնասիրել, եւ ան-
գամ մը երկնցուցած ձեռքը ետ չէր
քաշեր: Ինկեղծ ու տաք սիրտ մը
գտնալուն պէս իր սրտի ստուգէ
պատեանը կիլիսար եւ անձնատուր
կըլլար բոլոր հողուով այնպիսի
տաքութեամբ, այնպիսի անձնուի-
րութեամբ, ինչպէս որ Գապէշքօվ
կը փարուէր առջի բոպէին:

Այն պաղ խորհրդածութիւնը որ
Պօպէքօվի բոլոր գործունէութիւն-
ներուն վրայ կը ցոլար, ի վնաս ի-
րեն կընար խաբել շատերը. որոնք
զինքը մօտէն չէին ճանչնար, ու ճախ
իւն դիմ մի անհաճոյ տպաւորու-
թիւն կուներային: Նա նշմարելով
հանդերձ, հոգ չէր ընդեր զայն փո-
խելու, երբ մասնաւոր մարդը կա-
րեւորութեան գլուխ էր:

Նա ճշմարտութիւնը կը քաղէր
բուն աղբիւրէն ուղիղ խղճէն, եւ
անողոք էր ընդդէմ անոնց երբ խաբ-
դախ հոգի ըլլալն, նշմարէր, ու ա
նոնց երբէք ներողամիտ չէր գըտ-
նուէր:

Նա, նախքան յեղափոխական շարժ-
ման մասնակցելը, երկար ժամա

նակ խոր մտածութիւններու բովէն
անցնելով վճռած էր իր առջի քայլը.
Իր հայրենակիցները, որոնք կը գնա-
հատէին անոր նկարագրերը եւ ա-
նոր մտքին կը վստահէին. այդքան
վճռականօրէն չը պիտի գրկէին ա-
պստամբութեան գաղափարը, եթէ
զինքը շարժման առաջին շարքերու
մէջ չը տեսնէին: Միայն իր այս ծա-
ռայութիւնը որ գործին պարգեւած
է, բաւական է անոր անունը գնե-
լու առաջին գործիչներու շարքը: Նա
իր ընդգրկած գործին մէջ ցոյց տուաւ
սկիզբէն միջնեւ վերջը, գործը ոգի,
վեհագոյն առաքինութիւններով օժ-
տուած, նա ինքը գրած է իր տապա-
նագիրը, գեղեցկագոյնը որ կընայ
հայրենասէրի մը զերգմանաբարը
պճնաղարգել, եւ սոսի մահուան ան-
կողնոյն մէջ իր մօրն ըսած խօսքն է:

«Կը մեռնիմ, բայց ցաւ չէ ինձի,
որովհետեւ բազաւոր եղայ ազատ
Պուլկարիան տեսնելով՝ զոր գունը եր-
բէք չի իր յուսադէր. կը մեռնիմ,
մայր, հանգիստ եմ անոր համար ալ,
որ միջնեւ վերջը պարտքս կատարեցի
հայրենիքիս, իրեն պարտաւոր եղած
տկար ուժերս նուիրելով»:

(Շաքուհալի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Գիտէ՞ք այս միջոցին ինչ բան կը շահագորգուէ Պոլսոյ թաղեցիներն ու թաղականները . մտիկ ըրէք :

Վերջերս այրած Գարակէօմբիկի Աստուածամօր պատկերը անտուն մնացած ըլլալով, Բերայի, Մայր եկեղեցւոյ և ուրիշ թաղերու Խորհուրդները հետապնդած են այդ պատկերը իրենց եկեղեցին փոխադրելու . և ստի չէ թէ Աստուածամօր բացառիկ պատիւ մը ընելու համար, այլ պարզապէս այդ պատկերին հետ իրենց մօտ քաջելու ուխտաւորները և հետեւաբար անոնց նուէրները . իրենց խարխլած պիւսճէները հաւասարակշռելու համար :

Պատրիարքարանը աւելի յարմար սեպած է այդ պատկերը փոխադրել Պալատու պատմական բայց ազբատ եկեղեցին, որպէս զի քիչ մը ան ալ իւրոտի :

— Պատրիարքարանի նպատակը Յանձնաժողովը գովելի մտածուած մը որոշեր է գաւառացի ուշիմ տղաք զրկել Պէրութի բժշկական վարժարանը :

— Թիֆլիզի «Հրատարակչական» ընկերութիւնը կը յայտարարէ թէ Ա. Պողոսեան անուն անձ մը 5000 թուպլի նուիրած ըլլալով, անոր տոկոսը (մօտ 500 թուպլի) երկու տարին անգամ մը պիտի տրուի Հայոց նոր գրականութեան (ԺԷ. դարէն սկսած) և բանասիրութեան վերաբերեալ լաւագոյն աշխատասիրութիւններու :

— Բալուէն կը գրեն Պոլսոյ հայ թերթերուն թէ՛ հունձքերը շատ յաջող են այս տարի . ժողովուրդը մեծ ուրախութեան մէջ է . և հացին ու ցորենին գիները արդէն 10 փարա վար իջած են :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

«Իրաւունք»ի պատասխանատու խմբագրին . — Ձեր թերթի 51րդ թիւոյն մէջ, մեր Սօֆիայի թըղթակցին վրայ յարձակելով, չէ թէ միայն լրագրութեան՝ այլ նոյնիսկ քիչ շատ ինքզինքը յարգելի գիտցող, և արժանապատուութեան տէր մարդու անվայել, կապելայական լեզու մը գործածած էիք :

Հիմա, առանց ըսի ըսաներու կը խնդրենք որ ձեր թերթի միջոցաւ պարզապէս եւ որոշ կերպով յայտնէք մեզի և հասարակութեան թէ՛ Մարիձայի ամերը ի՞նչ պատմած են ձեզ անոր մասին, պետական ո՞ր վարժարանէն արտաքսուած է . իր ո՞ր դասընկերին պատուոյն յարձակած է : կը սպասենք :

Փ. Պ. Տեղեակին . — Այդպիսի Մանթ կամ Անձանթ Դաշնակ-

ցականներու գրածին կարեւորութիւն տալու չէ : Անշուշտ ձեռքերնին անցուցած են շրջաբերականէն օրինակ մը, և որովհետեւ անկէ կասկածելու բան մը չէին կրնար գործ հանել, այդ միջոցին գիմած են . Իսկ գալով խմբագրին, կրնար դիտուել ըմբռնել որ իր ըրածը լոկ խմբագրական փոխանակութիւն մըն է, և ոչ մէկ խմբագրի զրկուած է շրջաբերականէն :

Փ. Պ. Պ. — Ձեր գրածքը ընդունած ենք, կը հրատարակենք յաջորդով :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսոյ թուրք թերթերը երբեմն ծիծաղելի ըլլալու չափ «թօհաֆ» լուրեր կը հրատարակեն, օրինակի համար «Սէրվէթ» վերջերս կը գրէ թէ՛ Սուլթանը շատ զգածուեր է եղբր Բէքինի մէջ Եւրոպացիներուն կոտորուիլը լսելով :

Ապառաժ սիրտ մը՝ որ իր հարիւր հաղորներով անմեղ հպատակները անուղիմօրէն կոտորել կուտայ, և կը շարունակէ անգթօրէն մասնակի սպանութիւններով, և ուրիշ սարսափներով տոկուն և արգիւնաւոր ցեղի մը կենսական ուժերը սպառել, ինչպէ՞ս կրնայ զգածուելի ափ մը օտարներու սպանութիւնովը :

Բաներ կան զորս մարդ ձեւի համար արտայայտելն ալ կամընայ . . . բայց չափազանց պահանջկոտ չե՞նք ըլլար, երբ պալատական թուրք գրողէ մը քիչ մը ամօթ կամ խղճահարութիւն սպասենք :

«Սէրվէթ»ի մէկ ուրիշ ծիծաղելի լուրն ալ ան է թէ՛ Սուլթանը Մեծ աէրութեանց հետ բանակցութեան մէջ է մտեր և պատրաստութիւն կը սեսնէ եւ շեք ինք ալ զինուորներ զրկելու Մայրագոյն Արեւելք :

Գէշ չէ եթէ երբէք այդ զօրքերը փոխադրող երկրորդ «Էթթուրուլ» մը կարենայ ճարել, և կամ թերևս Տեւտոնեան Ապետներու զաւակները, որոնք թրքական բանակները առաջնորդեցին Յունաստանի մէջ, իրենց զրահաւորներուն մէջ հիւրընկալին զանոնք . և քով քովի քաղաքակրթութեան դատը պաշտպանեն Չինական բարբարոսութեանց դէմ :

Թրքական մէկ ուրիշ կատակերգութիւնն ալ Հիճազի երկաթուղոյն խնդիրն է : Պալատական թերթերը ամէն օր կարճանագրեն այսինչ կամ այնինչ փաշային կամ պէյին կողմէն եղած խոշոր նուէրներն, և որոնց տակը սակայն ծածկուած են այն պարտաւորիչ նուիրատուութիւններն, որ ստիպուած է ընելու անթիւ, մերկ հպատակ քրիստոնեայ ժողովուրդը, և որոնք սպանուա-

բար պիտի երթան չէ թէ Հիճազ այլ պարպուած գանձատունը : — Էտիքիէի նահանգին մէջ առաջակներու կողմէ առեւանգուած ֆրանսական հրապատարկութեանը ազատուեր է, թուրք զինուորները յաջողած են ձերբակալել առաջակները :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Հետզհետէ հասնող հեռագիրները կը հաղորդեն որ Բէքինի գետապանական մարմինը և անոնց պարագաններն ողջ և առողջ են, և քիչ օրէն Թիէն-Չին պիտի տարուին հսկողութեամբ . թէեւ հակառակ լուրեր ալ պակաս չեն, օրինակի համար :

Տէլլի-Նիզի կը հաղորդեն որ Բէքինի Անգլիական գետապանատան շինիչի թարգմանը յաջողած է փախչիլ և կը պատմէ թէ մինչեւ իր փախուստը, գետապանական մարմնոյն անդամներէն մէկ մասը արգէն սպաննուած էր :

— Թունքինէ կը հաղորդեն թէ ձարոնական զօրաբանակ մը Շանկա-Քուանի մօտերը ցամաք ելելով մեծ յաղթանակ մը տարած է Չինացւոց վրայ :

— Քանթոնէն Անգլիական թերթի մը կը հաղորդեն որ Չինական կայսրը հրովարտակով մը հրամայած է նահանգապետներուն եռանդուն միջոցներ ձեռք առնելով պատրաստ ըլլալու թէ պաշտպանողականի և թէ յարձակողականի :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Քաղաքիս Իտալական հիւպատոսարանը, երէկ պաշտօնական յայտարարութիւնով մը իմացուցած է միւս հիւպատոսներուն թէ՛ Իտալիոյ թագաւորը, Հովապէրթօ սպաննուած է :

Մանրամասնութիւնք կը պակասին :

— Սերպիոյ Ալէքսանտր թագաւորը իր նշանուելուն առթիւ, Միլանի դէմ եղած դաւադրութեան գործին մէջ յանցաւոր եղողներէն մէկ քանիին պատիժները կիսով չափ մեղմացուցեր, և մէկ քանիին ալ բոլորովին ներեր է, այս վերջիններուն մէջ կան նախկին երկու նախարարներ :

— Լուր կը պարտի թէ լորտ Ռօպէրտօսի և լորտ Քիչնէրի միջև անհամաձայնութիւններ կան, և թէ ասոնք շատոնց իրարմէ բաժնուած պիտի ըլլաին եթէ Քիչներ Սալիզպրիի սիբիլին եղած չըլլար :

Այս անհամաձայնութեան գըլխաւոր պատճառը Քիչնէրի 500 զինուոր գերի տալն է :

Թրանսվալի մէջ զինուորական քառօին վերջ մը տալու համար, շատերը կը յուսան որ վերին հրամանատարութիւնը նորէն պիտի յանձնուի Պուլլերին :

Այս անհամաձայնութեան միակ պատճառն Պօէրնբրուս յամառ դիմագրութիւնն է, որոնք կանոնաւոր պատերազմ մղելու անկարող, հրօսակային խումբեր կազմած՝ ահագին քանակներ կուտան Անգլիացիներուն :

ՊԱՇՏՈՆԱՒԱՆ Ա.ՉԻ

Հոգաբարձութիւնս հարկ կը համարի ծանուցանել թէ ինպատարաւորս Ազգ. երկսեռ վարժարանաց 120 կտոր խնամով և նորը ճաշակաւ պատրաստուած ձեռառագործները վիճակահանութեան դրած է, վիճակահանութեան մէն մի տոմսի գինը 1 ֆրանք արժողութեամբ :

Լիւայոյս եմք որ արգոյ հայ հասարակութիւնը բազմաթիւ ազբատ և որը մանուկներու կրթութեան գործը սպասովելու մեր այս ձեռնարկը պիտի հաճի քաջալերել, փութալով գնել վիճակահանութեան այդ տոմսերէն :

Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգ. երկսեռ վարժարանաց Վառնա (Կնիթ)

Ա Ձ Դ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Ե. Վ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ Նոր Ընթերցարան Բ. ՏԱՐԻ ԿԱՏԿԵՐԱԶԱՐԻ

Կը պարունակէ հրահանգի բարոյական պատմութիւններ, իրադատական տեղեկութիւններ, առողջապահական խրատներ և ազգային-պատմական կտորներ, ամենքն ալ սղայոց հասկնալի լեզուով և ոճով գրուած : Բազմաթիւ ոտանաւորներ, հանելուկներ և առածներ պիտի նպաստեն ընթերցողը տղուն հաճելի և օգտակար ընելու : Նոր-Ընթերցարանի այս Բ. տարին ալ պիտի գտնէ անտարակոյս այն ընդունելութիւնը, որուն արժանացաւ Ա. տարին :

Գինն է 1 ֆրանք . գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղջ Դիմել հետեւէնալ հասցէին՝

Գ Կ. Պօնճուքեան (Պուլկարիա) Վառնայ Մանթ . — Գ. տարին լոյս պիտի տեսնէ յառաջիկայ Սեպտեմբեր ամսոյ սկիզբը :

ՉՈՒԱՐԱՆ «ԿՈՒՅԵՆՊԵՐԿ» (Տպագրական տառերու)

Կարճր Անտաղ . Ռշիդ կարգ Հաւաասար քարձրոտքին

Ամէն լեզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ գներով Հասցէ՝

Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Jgnatieff № 3,

Ա Ձ Դ

Սերոն Բ. Տէրմիճեան, գիտէ ֆերանսերէն, հայերէն, և տաճկոնէն գրաչարութիւն ով որ կուզէ թող հաճի իրեն հետ բանակցիլ, հասցէն է «Կայէթ թերթի խմբագրութիւնը» :

Печатница Хр. Н. Войниковъ—Варна.